

Արմինե Մ. Մելքոնյան

«ՀԱԿԱՏՈՅ ՄԱՆԿՈՒՆՔ»-Ը ԵՎ «ԿԱՏԱՐԵԱԼ ՓԻԼԻՍՈՓԱ»-Ն ԸՍՏ ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹԻ*

Հայ միջնադարյան մատենագրության ամենախորհրդավոր և հետաքրքրական կերպարներից մեկի՝ Ալեքսանդրյան նորալատոնական դպրոցի ներկայացուցիչ Դավիթ Անհաղթի ապրած ժամանակի, անձնավորության և գրական ժառանգության հարցի շուրջ դեռևս չկա միասնական տեսակետ:

Հաստատելով, որ Դավիթ Անհաղթի հայերեն ժառանգությունը բաղկացած է չորս փիլիսոփայական երկերից, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Ս. Արևշատյանն** իրավամբ նշում է, որ նա պետք է գրած լինի նաև աստվածաբանական բնույթի երկեր, քանի որ Դավիթը չէր կարող չմասնակցել 5-6-րդ դարերում հայ, հույն և ասորի եկեղեցականների և աստվածաբանների միջև ընթացող դավանաբանական բուռն վեճերին¹:

Դավթին պատկանող աստվածաբանական բնույթի երկերի վերաբերյալ ֆրանսիացի հայագետ **Ժ.-Պ. Մահեն** գրում է. «Նման հայտնագործությունը, մեր կարծիքով, շատ լուսաբանող կլիներ: Ի վերջո այն մեզ հնարավորություն կտար խորապես ըմբռնել և հասկանալ, թե որոնք են Դավթին իր հայրենիքի և ավանդությամբ նրան վերագրվող ժամանակաշրջանի հետ միավորող կապերը»²: Իհարկե, ուշագրավ է նաև Ս. Արևշատյանի առաջադրած այն վարկածը, որ Դիոնիսիոս Արեոպագացու անունով հայտնի երկերի հեղինակներից մեկը պետք է որ լինի Դավիթ Անհաղթը³, սակայն այն խորապես ուսումնասիրման և հիմնավորման կարիք ունի:

Միջնադարյան աղբյուրներում միանշանակ Դավթինն է համարվել «Բարձրացուցէք» անվամբ հայտնի «Ներբողեան ի սուրբ Խաչն աստուածընկալ» երկը, որի ստեղծման մասին հիմնական տեղեկություններն ստանում ենք երկի նախադրությունից, Գյուտ Ա Արահեզացի կաթողիկոսի և Դավթի նամակագրությունից, Վարդան Հաղբատեցու, Դավիթ Քոբայրեցու հեղինակած և Գրիգոր Աբասյանի խմբագրած «Պատճառներից»⁴: Ըստ

*Հոդվածն ընդունվել է տպագրության 24.07.2013:

1 Տես **Արևշատյան Ս.**, Դավիթ Անհաղթի խնդիրը նոր լուսաբանությամբ, «Բանբեր Մատենադարանի», N 9, Եր., 1969, էջ 19:

2 **Mahé J.-P.**, Le parfait philosophe et la divinité dans les Définitions de David l'Invincible, «Դավիթ Անհաղթը՝ Հին Հայաստանի մեծ փիլիսոփան», Եր., 1983, էջ 281:

3 Տես **Արևշատյան Ս.**, Դավիթ Անհաղթի փիլիսոփայական ժառանգությունը, «Դավիթ Անյաղթ, երկասիրությունը փիլիսոփայական», Եր., 1980, էջ 18-23:

4 Տես **Մելքոնյան Ա.**, Դավիթ Անհաղթ փիլիսոփայի «Ներբողեան ի սուրբ խաչն աստուածընկալ» երկի «պատճառ»-ները, «Պատմաբանասիրական հանդես», 2013, N 2:

Ե (ՏԵ) քաղթ, թիվ 3 (43) հուլիս-սեպտեմբեր, 2013
ՎԷՄ համահայկական հանդես

այս աղբյուրների՝ Գյուտ կաթողիկոսի խնդրանքով Դավիթ Անհաղթը գրել է «Բարձրացուցէք»-ը՝ ընդդէմ Հայաստան ներթափանցած նեստորականների:

Այն մասնագետները, ովքեր ընդունում են, որ «Բարձրացուցէք»-ի հեղինակն իսկապէս Դավիթ Անհաղթն է, հիմնվում են երկի բարձրարվեստ ոճի և հունաբան լեզվի վրա⁵: Փիլիսոփայական գիտությունների դոկտոր **Հակոբ Ներսոյան** առաջինն էր, ով **Ներբողի** աստվածաբանական վերլուծությունը կատարելիս, մատնանշեց ընդհանուր գաղափարներ և հատվածներ «Բարձրացուցէք» և «Սահմանք իմաստասիրութեան» երկերի միջև: Ավելին՝ նկատելով, որ միջնադարյան աղբյուրների համաձայն Դավիթն «Անհաղթ» պատվանունը ստացել է աստվածաբանական վեճերում հաղթող հանդիսանալու արդյունքում⁶, նա գրում է. «Եթե այն հեղինակը, ով գրել է «Ներբողը», նույն անձը չէ, ով գրել է «Սահմանքը», ապա Դավիթ Անհաղթը հենց նա է, ով գրել է «Ներբողը»⁷:

Իրաչին նվիրված ներբողը սկսվում է Սաղմոսաց գրքի հետևյալ՝ «Բարձր արարէք զՏէր Աստուած մեր. երկիր պագէք պատուանդանի ոտից նորա» բառերով⁸: Դավիթ մարգարեի հետևողությամբ, ով կոչ էր անում Իսրայելյան ազգին երկրպագել Սիոն լեռը՝ որպես Տիրոջ ոտքերի պատվանդան, Դավիթ փիլիսոփան հորդորում է հավատի մանուկներին ամենուրեք երկրպագել սուրբ Իրաչին. «զուրբ կատարեալ հաւատոյ մանկունս ընդհանուր յերկրպագութիւն ձայնի յորդորեմք»⁹: Այստեղ գործածվող **«հաւատոյ մանկունք»** արտահայտությունն առնչվում է հայկական, ինչպես նաև օտար աղբյուրներում հանդիպող «ուխտի մանկունք», «մանկունք եկեղեցոյ» հասկացություններին: Վերջինները մեկնաբանվել են հիմնականում իբրև «հոգևորականություն», «հավատացյալների համայնք»¹⁰:

Պատմական գիտությունների դոկտոր **Մ.-Է. Շիրինյանը** նկատելով, որ հայ և օտար մասնագետների ուսումնասիրություններում շեշտադրվել է «ուխտ» բառը, առավել կարևորում է «մանկունք» եզրը՝ որպես վերոնշյալ արտահայտությունները կապակցող հիմնական եզրույթ¹¹: Հայկական,

5 Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի (ՆԲՀԼ), հատ. Ա, Եր., 1979, էջ 9, **Ազեռեան Մ.**, Լիակատար Վարք և Վկայաբանութիւն Մրբոց, հտ. Ե, Վենետիկ, 1812, էջ 320, **Մուրադյան Ա.**, Դավիթ Անհաղթի անձնավորության, ժամանակի և ժառանգության հարցի շուրջ, «Պատմաբանասիրական հանդես», 1981, N 1, էջ 212-213:

6 Հմմտ. **Մրուանձտեանց Գ.**, Հնոց և Նորոց, Կ. Պոլիս, 1874, էջ 68-77:

7 **Nersoyan H.**, The Cross of God: The religious Philosophy of David the Invincible, “David Anghaght the Invincible philosopher”, Atlanta, 1986, p. 70.

8 Սաղմ. ԴԸ 5 և 9 («...երկիր պագէք ի լեան սուրբ նորա»):

9 Դավթի Անյաղթ փիլիսոփայի Մատենագրութիւնք և թուղթ Գիտայ առ Դավթ, Վենետիկ, 1932, էջ 10: Այս նախադասության մեջ «զուրբ»-ը քերականորեն միանշանակ վերաբերում է «մանկունս»-ին, քանի որ ունի հայցականի «զ» հոդը: «Կատարեալ»-ը կարող է վերաբերել թե՛ «հաւատոյ»-ին և թե՛ «մանկունս»-ին: Այսինքն՝ պետք է հասկանալ կամ «կատարյալ հավատի սուրբ մանուկներին», կամ «հավատի սուրբ և կատարյալ մանուկներին»: Սակայն Ներսես Շնորհալու՝ «Բարձրացուցէք»-ի մեկնությունից (որին կանոնադաժանանք ստորև) հետևում է, որ «կատարեալ»-ը նույնպես «մանկունս»-ի հատկանիշն է: Ի դեպ, անգլերեն թարգմանության մեջ թե՛ «սուրբ»-ը և թե՛ «կատարեալ»-ը հասկացվել են իբրև «հաւատոյ»-ի հատկանիշներ. «the children of the holy and perfect faith», ինչը ճիշտ չէ: Տե՛ս “An Encomium of the Holy Cross of God” by David the Invincible Philosopher”, “David Anghaght” the Invincible philosopher”, p. 82.

10 Տե՛ս **Ջեփրյան Գ. Լ.**, Եղիշեի երկը որպես վաղ Հայկական եկեղեցու եկեղեցաբանության վկայություն, «Էջմիածին», 1990, հունվար (Ա), էջ 46-49:

11 Տե՛ս **Շիրինյան Մ.**, «Ուխտի մանկունք» և «մանկունք եկեղեցոյ», «Էջմիածին», 2002, օգոստոս

ինչպես նաև այլալեզու աղբյուրներից բերված օրինակների հիման վրա նա եզրակացնում է, որ ««մանուկ» բառը որոշակի հատկանիշներ ունեցող անձանց մատնանշող տեխնիկական հատուկ տերմին է», և որ վաղ շրջանի տեքստերում այն «մեծ մասամբ կիրառված է ինչպես եկեղեցական, այնպես էլ աշխարհիկ «քրիստոնյաներին» բնութագրելու համար»¹²:

«Բարձրացուցեք»-ում գործածված «հաւատոյ մանկունք» արտահայտությունը հանդիպում է նաև Եկեղեցու վարդապետներ Հուստինոս Վկայի (100-165) և Տերտուլիանոսի (165-220) երկերում, մատնանշելու համար հավատի հոր՝ Աբրահամի որդիներին¹³: Ներսես Շնորհալիս «Բարձրացուցեք»-ի ընդարձակ մեկնության համապատասխան հատվածում որպես հավատի հոր՝ Աբրահամի որդիներ համեմատում է Հին ուխտի թլփատության մանուկներին և Նոր ուխտի սուրբ մանուկներին. «Որպէս Դաւիթ զթլփատութեան մանկունս յորդորէր, իսկ մեք զսուրբ մանկունսն առաքինութեամբ յորդորեմք, կատարեալ ըստ հաւատոցն Աբրահամու, որք միանգամ ավագանաւն մաքրեցան մանկունք Նոր Միոնի մերովս բանի յորդորեմք յերկրպագութիւն կենարար խաչիս»¹⁴: Զուգահեռ անցկացնելով Հին կտակարանի թլփատության և քրիստոնեական մկրտության միջև՝ Շնորհալիս «հավատի սուրբ մանուկներ» է համարում քրիստոնյաներին: Այստեղ նա «մանկունք» եզրը կիրառում է Կղեմես Ալեքսանդրացու (150-215), Արքեպիսկոպոսի (216-277) և Պապիասի երկերում հանդիպող իմաստով, որոնցում «մանուկներ» էին համարվում վաղ շրջանի դեռևս մեծամասնություն չկազմող քրիստոնյաները¹⁵: Ըստ Շնորհալու՝ Դավիթը «սուրբ» բառով ցույց է տալիս հրեաների անսրբությունը, մինչդեռ «մեր» հավատի մանուկները սուրբ են իրենց վարքով և բարեգործությամբ: Շնորհալիս շեշտում է նաև հրեաների հավատի անկատարությունը, քանի որ նրանք միայն Հորն էին ճանաչում, մինչդեռ եկեղեցու որդիները կատարյալ են դառնում համագո Երրորդության խոստովանությամբ: Հին կտակարանում Դավիթ մարգարեն միայն մեկ ազգի էր հորդորում երկրպագության, իսկ Դավիթ փիլիսոփան՝ բոլոր հավատացյալներին. «Նոքա անկատար հաւատովք, զի ստուեր էր և զՀայր միայն գիտէին, իսկ որդոց եկեղեցոյ կատարեալ առնի համագոյական Երրորդութիւնն... առ ի Հինն միոյ ազգի միայն էր յորդորումն, իսկ մեք ամենայն հաւատացեալս ըստ որում ասէ այսպէս»¹⁶ : Այս հատվածում, բացի հրեական հավատի հանդեպ քրիստոնեության ունեցած առավելության շեշտումից, լավագույնս արտահայտված է Ներսես Շնորհալու համամարդկային, միաժամանակ՝ ազգային միտքը. նա ակնհայտորեն նախ՝ Դավիթ փիլիսոփային, այնուհետև՝ նրա երկը ազգայինից բարձրացնելով՝ զեռտելում է համամարդկային, համաքրիստոնեական համատեքստում:

Նշենք, որ Դավթի կիրառած «հաւատոյ մանկունք» արտահայտությանը

(Ը), էջ 90-110:

12 **Շիրինյան Մ.** (Է.), «Մանկունք» եզրն այլալեզու աղբյուրներում, «Էջմիածին», 2005, հունիս (Ջ), էջ 83:

13 Տես նույն տեղում, էջ 78:

14 Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետ՝ ՄՄ), ձեռ. 1409, թ. 293բ-294ա:

15 Տե՛ս **Շիրինյան Մ.** (Է.), «Մանկունք» եզրն այլալեզու աղբյուրներում, էջ 77:

16 ՄՄ, ձեռ. 1409, թ. 294ա:

զուգահեռ՝ Ներսես Շնորհալին «Բարձրացուցէք»-ի մեկնության մեջ հավասարապես կիրառում է «մանկունք Նոր Սիոնի»¹⁷, «մանկունք եկեղեցու»¹⁸, «որդիք եկեղեցու»¹⁹ համարժեքները:

Ուշագրավ է, որ «Բարձրացուցէք»-ում «հաւատոյ մանկունս»-ից առաջ դրված «սուրբ, կատարեալ» հատկանիշներով Դավիթ Անհաղթը «Մահմանք իմաստասիրութեան» երկում բնորոշում է աստվածանման փիլիսոփային. «Կատարեալ իմաստասէրն նման է Աստուծոյ»²⁰: Այս միտքը նա զարգացնում է հատկապես Պլատոնի «Զիմաստասիրութիւն՝ նմանութիւն Աստուծոյ ըստ կարողութեան մարդկան»²¹ դրույթի վերլուծության մեջ: «Կատարեալ» ասելով՝ Դավիթը հասկանում է բարի, իմաստուն և ուժեղ. կատարյալ փիլիսոփան բնութագրվում է բարությանը (որովհետև Աստծու նման նա նույնպես խնամում է բոլորին, հոգ է տանում անկատար հոգիների մասին՝ հասցնելով կատարյալ գիտության), իմաստությանը (որովհետև ինչպես Աստված ամեն ինչ գիտի, այնպես էլ կատարյալ փիլիսոփան է ձգտում ամեն ինչ իմանալ) և ուժով (որովհետև ինչպես Աստված կարող է անել այն ամենը, ինչ կամենում է, այնպես էլ կատարյալ փիլիսոփան կամենում է այնքան, ինչքան կարող է անել)²²: Դավիթը հավելում է, որ այլ է Աստծու բարությունը, իմաստությունը և կարողությունը: Բարությունն Աստծու էությունն է, այն ներհատուկ է Աստծուն, ով չի կարող չարիք գործել: Իսկ մարդը բարությունը ձեռք է բերում և կարող է ունենալ նաև չարություն: Նույնը վերաբերում է նաև իմաստությանը. Աստված գիտի ամեն ինչ և միշտ, իսկ մարդը հնարավորության սահմաններում է ձգտում այդ գիտությանը: Ունակության մասին Դավիթը նշում է, որ Աստծու համար չկա որևէ անկարելի բան, իսկ փիլիսոփայի կատարյալ կարողությունն այն է, որ նա, իմանալով իր բնության թույլ լինելը, չի ձգտում անկարելի բաների, այլ ցանկանում է այն, ինչին կարող է հասնել:

Այսպիսով, Դավթի համար «կատարեալ»-ը աստվածանմանության տարբեր հատկանիշները միավորող խորհմաստ **եզր** է: «Մահմանք իմաստասիրութեան» երկի մեկ այլ հատվածում, խոսելով Աստծուն նմանվելու մասին, հեղինակը գրում է. «Իսկ նմանութիւն Աստուծոյ է սուրբն և արդարն զոյ հանդերձ խոհեմութեամբ»²³: «Հանդերձ խոհեմութեամբ»-ը բացատրվում է որպես տեսական փիլիսոփայության, իսկ «սուրբ և արդար» լինելը՝ գործնական փիլիսոփայության մաս: Սրա հիմքում ընկած է նորայլատոնական փիլիսոփայության այն միտքը, որ Աստծուն մոտենալու համար պետք է լինել մարմնական կրթերից մաքրված և մտքով կատարյալ, քանի որ «կատարեալ իմաստասէր է՝ ոչ որ բազում ինչ գիտէ, այլ զախտս կարող զոյ հնազանդեցուցանել»²⁴:

17 Նույն տեղում:

18 Նույն տեղում, թ. 291բ:

19 Նույն տեղում, թ. 294ա:

20 **Դավիթ Անյաղթ**, Մահմանք իմաստասիրութեան, համահավաք քննական քննագիրը, թարգմանությունը գրաքարից ռուսերեն, առաջաբանը և ծանոթագրությունները **Ս. Ս. Արևշատյանի**, Եր., 1960, էջ 40:

21 Նույն տեղում, էջ 78:

22 Նույն տեղում, էջ 40, 82-84:

23 **Դավիթ Անյաղթ**, Մահմանք իմաստասիրութեան, էջ 86:

24 Նույն տեղում, էջ 148:

«Բարձրացուցէք»-ում Խաչին երկրպագության հորդորից հետո Դավիթը բացատրում է նաև, թե ինչու պետք է երկրպագել Խաչին, և որպես առաջին պատճառ նշում, որ այն «մեզ ի մահուան է ի կեանս առնի փոխադրութեան և ի կեանս ոչ իբրև յաղցատրս և յերկրայինս այլ յանվախճանս, և յանպատումս և յանմատոյցս»²⁵: Երկրային և անցավոր կյանքը հակադրվում է հավիտենական և անպատմելի կյանքին, որն անգամ հրեշտակների ունեցած բարիքներից առավել է: Երկրորդ պատճառն այն է, որ Խաչն ազատում է մեզ մարմնական կրքերից և հոգին մաքրում ախտերից. «Քանզի սովա մեզ ի դիւրութեանք քաջասնութիւն մարմնոյ, և ամենայն որ ինչ յաշխարհիս զհետ երթայ առանց ըրձից. և որ ինչ յոգիսն տրամադրեալ են ախտք՝ սա մեզ է փրկութեան պատճառ»²⁶:

«Բարձրացուցէք»-ի վերոնշյալ երկու դրույթները, որոնցում հեղինակը զարգացնում է հոգու մաքրագործման և անմատչելիին մոտենալու, աստվածային խորհրդին արժանանալու նորալատոնական փիլիսոփայության գաղափարները, սերտորեն առնչվում են «Սահմանք իմաստասիրութեան» երկում տրված փիլիսոփայության երրորդ՝ «Իմաստասիրութիւնն խոկումն է մահու»²⁷ սահմանմանը: Մեկնաբանելով Պլատոնի այն միտքը, որ փիլիսոփայությանն անկեղծորեն նվիրված մարդիկ մտածում են միայն **մահանալու** («մեռանելն») և **մեռնելու** («է մեռանելն») մասին, Դավիթը գրում է, որ **մահանալով** փիլիսոփան տիրապետում է գործնական փիլիսոփայությանը, քանի որ այն ժամանակ նա զբաղվում է կրքերի մահացմամբ: Իսկ **մեռնելով** փիլիսոփան բացահայտում է տեսական փիլիսոփայությունը և սկսում խորհել Աստծու մասին. «Քանզի յետ մեռուցանելոյ զախտս և մաքրելոյ և սրբելոյ զհոգին վերաձգտի առ տեսութիւն և սկիզբն առնէ աստուածաբանելոյ»²⁸:

Դավիթը Պլատոնի հետևողությամբ կրկնում է, որ «անսուրբն և սուրբ հայիլ ոչ բարուք և իրաւ»²⁹: Աստվածային խորհրդին հաղորդակցվելու վերաբերյալ նույն գաղափարն արտացոլված է նաև «Բարձրացուցէք»-ում. «Եւ ի խոնարհելն մերում, զամենայն ի բաց դիցուք զծանր մթացուցիչ խորհուրդս. յստակ հայեցուածովք հոգւոյն թեթևացեալ՝ առ սուրբ երկնային խորհուրդն արժանացեալք ի բարձրագոյնս վերաբերիցիմք»³⁰: Ինչպես «Սահմանք»-ում, այստեղ նույնպես ընդգծվում է հոգու մաքրության անհրաժեշտությունը. «յոյժ բազմապատիկ մաքրութեան եղիցին պետք մատչելն կամեցողին»³¹: Եվ եթե հրեշտակներն անգամ Աստծուն մերձենալիս թևով ծածկում են իրենց երեսները, ապա «որայիսի՛ առ բուն անարգս և հողանիւթեայս առ մարդս պահանջեսցի արժանաւոր մաքրութիւն»³²:

Թե՛ «Բարձրացուցէք»-ում և թե՛ «Սահմանք»-ում հստակորեն նշմարվում է նորալատոնական փիլիսոփայության և հայրաբանական մտքի մեջ ձևավորված աստվածացման եռաստիձան ճանապարհը՝ **մաքրություն**,

25 **Դավթի Անյաղթ** փիլիսոփայի Մատենագրութիւնք..., էջ 10:
 26 Նույն տեղում:
 27 **Դավթի Անյաղթ**, Սահմանք իմաստասիրութեան, էջ 66:
 28 Նույն տեղում:
 29 Նույն տեղում, էջ 68:
 30 **Դավթի Անյաղթ** փիլիսոփայի Մատենագրութիւնք, էջ 10:
 31 Նույն տեղում, էջ 11:
 32 Նույն տեղում:

ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆ ԹՅՈՒՆ

Ե (ԺԵ) ԳՐԱՐԻ, ԹԻՎ 3 (43) ԽՈՒՄԻ-ՄԵԿՐԵԼԵՐ, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

լուսավորություն, աստվածացում: Առաջին աստիճանի՝ մաքրության համար փիլիսոփա-աստվածաբան Դավիթը կարևորում է կրքերի մահացումը՝ որպես գործնական փիլիսոփայություն, որը նա զուգադրում է Խաչին խոնարհաբար երկրպագելուն (խոնարհ լինելը նույնպես գործնական փիլիսոփայության կարևոր դրույթներից է), ինչն, իհարկե, զուտ երկրպագությունից բացի ունի բարոյագործնական, ինչպես նաև մտահայեցողական նշանակություն: Աստվածացման երկրորդ աստիճանը Դավթի համար գիտությունների գիտություն և արվեստների արվեստ փիլիսոփայությունն է: Եվ այս ամենն անցնելուց հետո միայն մաքուր և կատարյալ փիլիսոփան կարող է մոտենալ աստվածային խորհրդին, հասնել աստվածանմանությանը: Եվ ինչպես «Մահմանք»-ում է ասվում, որ մարդը հնարավորություն ունի Աստծուն նմանվելու «ըստ կարողութեան մարդկան»³³, նույնպես էլ Խաչին խոնարհաբար երկրպագելը՝ այսինքն կատարելության ճանապարհն անցնելը հնարավոր է, «որչափ ի կարի մերում է»³⁴:

Կարող ենք ասել, որ «Բարձրացուցէք»-ում «հավատի մանուկներին» բնորոշող «սուրբ» և «կատարեալ» բառերը պատահական չեն ընտրված. «սուրբ»-ը աստվածացման առաջին, իսկ «կատարեալ»-ը երկրորդ աստիճանն է: Կարծում ենք, այս եզրերը բառացիորեն և գաղափարապես հիմնված են Նոր Կտակարանի՝ «Երանի այնոցիկ, որ **սուրբ** են սրտիք, զի նքազ Աստուած տեսցեն» և «Եղերուք դուք **կատարեալք**, որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է»³⁵ Քրիստոսի խոսքերի վրա:

Այսպիսով, «Բարձրացուցէք»-ում գործածվող «հաւատոյ մանկունք»-ը հոգևորականների կամ հավատացյալների որոշ խմբին վերաբերելուց բացի շատ ավելի ընդգրկուն և խոր իմաստ ունի: Պատահական չէ, որ Դավիթը «մանկունք» եզրը կիրառում է նաև «Բարձրացուցէք»-ի վերջին հատվածում, երբ նկարագրում է, թե ինչպես Քրիստոսի Երկրորդ գալստյան ժամանակ հարություն առած սրբերը Փեսայի լուսազգեստ բարեկամների հետ միասին հրավիրվում են մասնակցելու հարսանյաց հանդեսին. «Յորժամ երկնայթոխ զնախայարուցեալսն զսուրբսն ի Քրիստոս կենդանեօքս հանդերձ, զբարեկամսն փեսային լուսազգեստ, նմա՝ զհարսանեացն մտին **մանկունսն**՝ յառաջագոյն ընդ առաջ հրաւիրեսցես»³⁶: Այս անցումը խորհրդանշական է. ներբողի սկզբում Դավիթը «հավատի մանուկներին» հորդորում է խոնարհաբար երկրպագել Խաչին, որն աստվածանմանությանը հասնելու ճանապարհի սկիզբն է: Իսկ Ներբողի վերջում հոգու ինքնամաքրման, կրքերից ձերբազատման, կատարելության ճանապարհն անցնելուց հետո այդ «մանուկները» հրավիրվում են մասնակցելու հարսանյաց հանդեսին, այսինքն՝ արժանանում են փրկության, հասնում աստվածանմանությանը: Նրանք, ովքեր անփոյթ գտնվելով իրենց անձի փրկության հանդեպ, չեն կարողանա ինքնուրույն անցնել կատարելության ճանապարհը, օգնության կարիք կունենան. «Յորժամ ամենայն, որ զինքն արժանացոյց՝ մաքրութեամբ պսակեսցի, և քում ամենայն որ անձին անփոյթ արա-

33 **Դավիթ Անյաղթ**, Մահմանք իմաստասիրութեան, էջ 66:

34 **Դավիթ Անյաղթ** փիլիսոփայի Մատենագրութիւնք..., էջ 10:

35 Աւետարան ըստ Մատթէոսի, Ե 8-9, 48:

36 **Դավիթ Անյաղթ** փիլիսոփայի Մատենագրութիւնք..., էջ 25:

րեալ գփրկութենէ, օգնականութեան կարոտասցի»³⁷: Այստեղ նույնպէս նկատվում է «Սահմանք իմաստասիրութեան» երկի արձագանքը, որտեղ կատարյալ փիլիսոփայի կարևոր առաքելություններից մեկն էր անկատար հոգիներին օգնելը, նրանց մասին հոգ տանելը³⁸:

«Բարձրացուցէք»-ում «մանկունք» եզրը գործածվում է նաև Խաչի բարոյաբանական որակումներին վերաբերող հատվածում. «Տղայոց պահապան, մանկանց դաստիարակ, ծերոց ժողովարան»³⁹: Խորհրդաբանական առումով սա կարելի է հասկանալ հոգևոր զարգացման տարիքների տեսանկյունից, ինչն արծարծվում է Պողոս առաքյալի թղթերում⁴⁰ և զարգանում քրիստոնեական մատենագրության մեջ: Սակայն, ելնելով համատեքստից, կարծում ենք, որ այստեղ այն կիրառված է բառիս ուղղակի՝ «պատանի, երիտասարդ» նշանակությամբ:

Հետաքրքրական կլինի պարզել «հաւատոյ մանկունք» արտահայտության հետագա կիրառությունները հայ աստվածաբանական գրականության մեջ՝ «մանկունք» եզրով կազմվող մյուս արտահայտություններից ունեցած տարբերությունն ավելի լավ ընկալելու համար, ինչը հետագա ուսումնասիրության խնդիր է:

«Կատարյալ փիլիսոփային» և «հավատի մանուկներին» առնչվող դրույթների վերլուծությունը կարևոր է նաև աղբյուրագիտական տեսակետից: Դավիթ փիլիսոփան Խաչին նվիրված իր Ներբողն ստեղծելիս օգտվել է իրենից առաջ եղած ինչպես փիլիսոփայական, այնպես էլ աստվածաբանական հարուստ ժառանգությունից: Օրինակ՝ Հին և Նոր կտակարանների զուգադրումներին և Խաչի բարոյաբանական նշանակությանը վերաբերող հատվածներում նկատելի է Կյուրեղ Երուսաղեմացու⁴¹, Եփրեմ Ասորու⁴² և Հովհան Ոսկեբերանի⁴³ ազդեցությունը: Քրիստոսաբանական հայացքների և ձևակերպումների, ինչպես նաև աստվածանմանությանը հասնելու ուսմունքի վրա մեծ է Կապադովկիական հայրերի, հատկապես Գրիգոր Նյուսացու ազդեցությունը, ով իր հերթին կրում էր որիգենյան-տրպլատոնական փիլիսոփայության կնիքը: Կատարելապես տիրապետելով հունարենին՝ հավանական է, որ Դավիթն օգտված լինի փիլիսոփայական և աստվածաբանական երկերի դեռևս հայերեն չթարգմանված հունարեն բնագրերից:

Ընդհանրապես, «Բարձրացուցէք»-ում ակնհայտ է փիլիսոփայություն-աստվածաբանություն անխզելի կապի արձագանքը: Իսկ նորպլատոնականության ազդեցությունը նկատվում է Ներբողի տարբեր՝ անգամ աստվածաշնչային իրողություններին վերաբերող դրվագներում: Օրինակ՝

37 Նույն տեղում:

38 Տե՛ս **Դավիթ Անյաղթ**, Սահմանք իմաստասիրութեան, էջ 82:

39 **Դավիթ Անյաղթ** փիլիսոփայի Մատենագրութիւնք..., էջ 24:

40 Հմմտ. **Եփես.**, Դ 12-16, Եբր., Ե 12-14:

41 Հմմտ. Երանելոյն Կիւրղի Երուսաղեմայ հայրապետի կոչումն ընծայութեան, Վիեննա, 1832, էջ 231-268:

42 Հմմտ. **Սրբոյն Եփրեմի** Մատենագրութիւնք, հտ. 4, Ճառք և աղօթք, Վենետիկ, 1836, էջ 69-78:

43 Հմմտ. **Յովհաննու Ոսկեբերանի** Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի Ճառք, Վենետիկ, 1861, էջ 195-213, **Յովհաննու Ոսկեբերանի** Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի Մեկնութիւն թղթոցն Պաղոսի, հտ. Բ, Վենետիկ, 1862, էջ 767-769, **Քյոսեյան Հ.**, Նորահայտ հատվածներ Հովհան Ոսկեբերանի Պողոսի թղթոց մեկնության հայերեն թարգմանությունից, «Բանբեր Մատենադարանի», N 16, Եր., 1994, էջ 189-191:

հայրաբանական գրականության մեջ ընդունված Հին և Նոր կտակարանների զուգադրման սկզբունքով Նոյի տապանը համարելով Խաչի նախօրինակ՝ Դավիթը նկարագրում է, թե ինչպես է խաչը կյանքի խեղդող ալիքների միջոց իրեն ապավինած հոգիներին դեպի երկինք բարձրացնում:

Փիլիսոփայություն-աստվածաբանություն կապի դրսևորման տեսակետից հատկանշական է նաև «Բարձրացուցեք»-ի ընդհանուր կառուցվածքը: Այն սկսվում է ոչ թե Խաչի վերաբերյալ սուրբգրային մեջբերումներով (իհարկե, բացի սկսվածքից), այլ փիլիսոփայական ձևակերպումներով, և աստվածաբանական վերլուծությունից առաջ հեղինակը տալիս է Խաչի փիլիսոփայական բնութագրումը: Այս երևույթի հիմքում, իհարկե, ընկած է դեռևս վաղ միջնադարում ձևավորված այն ընկալումը, ըստ որի փիլիսոփայությունն աստվածաբանության նախադուռն է, և Աստծու գիտությունը հասկանալու համար անհրաժեշտ է փիլիսոփայության իմացությունը: Փիլիսոփա-աստվածաբան Դավիթը կարծեք խորհրդաբանորեն զուգադրում է **փիլիսոփայությունը** և **Խաչը**: Եթե փիլիսոփայությունն աստվածաբանության նախադուռը և աստվածանմանությանը հասնելու **ճանապարհն** է, ապա «աստուածախաչ»⁴⁴-ը մարմնական կրքերից ազատագրվելու, կատարելության և փրկության հասնելու **գործիքն** է, միակ գործիքը, քանի որ նրանում պարադոքսալ ձևով հատվում են մահը և կյանքը, մեղսագործությունը և փրկագործումը, երկրայինը և երկնայինը, մարդկայինը և աստվածայինը:

Ինչպես կարևորել են մասնագետները, փիլիսոփայական երկերի հայերեն թարգմանությունը և լայնորեն ուսուցանումը նպատակ ունեին նպաստելու աստվածաբանական ինքնուրույն մտքի զարգացմանը, ինչը, դավանաբանականից բացի, ուներ նաև քաղաքական նշանակություն: «Բարձրացուցեք»-ում լավագույնս երևում է այդ մոտեցումը, քանի որ փիլիսոփայական եզրերի և գաղափարների միջոցով արտահայտված են աստվածաբանական ճշմարտությունները:

«Սահմանք իմաստասիրութեան» և «Բարձրացուցեք»-ի միջև եղած գաղափարական խիստ ընդհանրությունը, որ փորձեցինք ցույց տալ «հաւատոյ մանկունք» և «կատարեալ փիլիսոփա» եզրույթների միջև եղած կապով, նույնպես խոսում է ի նպաստ միջնադարյան աղբյուրների հաղորդած տեղեկությունների, որ երկու երկերն էլ գրվել են մինևույն հեղինակի՝ 5-6-րդ դարերում ապրած և գործած նորալատոնական Դավիթ Անհաղթի կողմից, ով ոչ միայն փիլիսոփա էր, ինչպես ընդունված է կարծել, այլև աստվածաբան: Եվ եթե Դավիթ Անհաղթն իր փիլիսոփայական հայացքների ողջ համակարգը ներկայացրել է «Սահմանք իմաստասիրութեան» երկում, ապա աստվածաբանական գաղափարներն ամփոփել է «Բարձրացուցեք»-ում, որը, Խաչին նվիրված ներքող լինելուց բացի, ընդգրկում է աստվածաբանական հարցերի լայն շրջանակ՝ քրիստոսաբանություն, փրկագործություն, մարեմաբանություն, եկեղեցաբանություն, վախճանաբանություն և այլն: Ուստի «Ներբողեան ի սուրբ խաչն աստուածընկալ» երկը խիստ հետաքրքրական է նաև Հայ եկեղեցու վաղ շրջանի աստվածաբանական-

44 Նշենք, որ քրիստոսաբանական կարևոր նշանակություն ունեցող «աստուածախաչ» բառը հայ մատենագրության մեջ առաջին անգամ հանդիպում է «Բարձրացուցեք»-ում: Տե՛ս ՆԲՀԼ, հտ. Ա, էջ 323, հտ. Բ, Եր., 1981, էջ 1017:

քրիստոսաբանական մտքի ուսումնասիրման համար:

Summary

THE «CHILDREN OF FAITH» AND THE «PERFECT PHILOSOPHER» ACCORDING TO DAVID THE INVINCIBLE

Armine M. Melkonyan

Philosopher David the Invincible in his Encomium on the Theoleptic Holy Cross calls the “holy and perfect children of faith” for adoration of the Cross of God. The word “child” (manuk) , which is a technical term specifying a group of people with certain properties, was used in theological texts to describe the clergymen as well as secular Christians. The “godlike philosopher”, who is defined as holy and perfect in the Definitions of Philosophy by David, is very similar with the concept of “children of faith”. Some other general ideas and expressions are indicated in the Encomium and the Definitions, written in the light of neo-platonic philosophy.

In the article the question of the authenticity of the Encomium is touched upon, accepting the testimonies of the medieval sources due to which the Encomium on the Holy Cross was created by the philosopher David the Invincible, the same author who wrote the Definitions and other philosophical works.

ՎԷՄ համահայկական հանդես
Ե (ՃԵ) քառի, թիվ 3 (43) հայխ-մեպրեմբեր, 2013
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ